Կարգապահական գործ թիվ ԿԳ-24165

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՀՌԻՓՍԻՄԵ ՌՈՒԲԻԿԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վահագն Քեշիշյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի և Կարեն Խալաթյանի,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Հռիփսիմե Ռուբիկի Մնացականյանի,

քննության առնելով փաստաբան **Հռիփսիմե Ռուբիկի Մնացականյանի (այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 3523), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Արսեն Պապոյանը **(այսուհետև նաև՝ Դիմող),** դիմելով Պալատ, հայտնել է, որ փաստաբան Հռիփսիմե Մնացականյանը դրսևորել է այնպիսի վարքագիծ, որով կասկածի տակ է դրել և խաթարել փաստաբանության նկատմամբ հարգանքը:

Ըստ ներկայացվածի՝ Փաստաբանի վստահորդների և Դիմողի միջև առկա է իրավական վեճ: Դիմողը հայտնել է, որ 24.06.2024թ. գտնվել է իրեն սեփականության իրավունքով պատկանող ք. Երևան, Ծարավ Աղբյուր 55/5 շենքում, նախկին վարձակալի գույքի տարահանման նպատակով: Նշված ժամանակահատվածում Փաստաբանը թվով հինգ անձանց հետ ներկայացել է նշված հասցեով:

Դիմողը հայտնել է, որ Փաստաբանը շատ կոնֆլիկտային է եղել, քանի որ Ավանի Ոստիկանության բաժանմունքի ոստիկանների մոտ, ինչպես նաև տարածքից ապրանքները հանող աշխատակիցների մոտ կոպտորեն վիրավորել է Դիմողին՝ անվանելով «գող, ավազակ, սրիկա» և նույնիսկ կատարելով հայհոյախառը բնույթի արտահայտություններ:

Դիմողի պնդմամբ, ՀՀ ոստիկանության Ավանի բաժանմունքում Փաստաբանը շարունակել է կատարել վիրավորական արտահայտություններ, մասնավորապես կատարել է «խոզ» և «վրայիցդ ինչ հոտ ասես չի գալիս» արտահայտությունները:

թիվ ԿԳ-24165-2-Ա
27.11.2024թ.

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Կարգապահական վարույթը հարուցվելուց հետո՝ 21.08.2024թ. Պալատում մուտքագրվել է Արսեն Պապոյանի դիմումը, որին կից ներկայացրել է ըստ Դիմողի, Փաստաբանի վարքագծին ականատես դարձած քաղաքացի Արման Շահինյանի հայտարարության պատճենը:

Արման Շահինյանը հայտարարություն է տվել այն մասին, որ Փաստաբանը կոպտորեն վիրավորել է Դիմողին՝ անվանելով «գող», «ավազակ», «սրիկա» և նույնիսկ հայհոյախառն բնույթի արտահայտություններ է հնչեցրել Դիմողի հասցեին: Ավանի ոստիկանության բաժանմունքի պետի աշխատասենյակում Փաստաբանը կրկին սկսել է վիրավորական բնույթի արտահայտություններ հնչեցնել և անգամ Դիմողին անվանել է «խոզ», ասել «վրայիցդ ինչ հոտ ասես գալիս է», և այդպես շարունակ:

Միևնույն ժամանակ սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 14.10.2024 թվականին Դիմողին ներկայացվել է պահանջ «Փաստաբանության մասին» օրենքի 39.5-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

21.10.2024թ. Պալատում մուտքագրվել է Դիմողի միջնորդությունն Արման Ստյոպայի Շահինյանին (Նույնականացման քարտ՝ 006112387, տրված 06.11.2017թ., 001-ի կողմից) և Արտյոմ Գագիկի Մկրտչյանին (Անձնագիր՝ AR0407321, տրված 04.08.2017թ., 005-ի կողմից) սույն կարգապահական վարույթին որպես վկա ներգրավելու մասին, ովքեր ականատես են եղել կատարվածին:

Դիմողը միջնորդությամբ նշել է, որ կարծում է, կարգապահական հանձնաժողովի կողմից ոստիկաններին որպես վկա հրավիրելու դեպքում ևս կհաստատվի Փաստաբանի նման վարքագիծը:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Հռիփսիմե Մնացականյանին առաջարկվել է Օրենքի 39.3-րդ հոդվածի 4 րդ մասի համաձայն ներկայացնել բացատրություն Արսեն Պապոյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 15.04.2024թ. բացատրությամբ մանրամասն ներկայացրել է Դիմողի և իր բարեկամ՝ Միքայել Խալաթյանի վարձակալության հետ կապված վեճը:

Փաստաբանը հայտնել է, որ 24.06.2024թ. Դիմողը հերթական անգամ փորձ է արել Միքայել Խալաթյանի գույքը տեղափոխել այլ տեղ և այդ ժամանակ Փաստաբանը զանգահարել է ոստիկանություն:

Փաստաբանի պնդմամբ, ինքը որևէ մեկին չի վիրավորել, հայհոյանքներ չի կատարել, քանի որ այդտեղ գտնվել են Փաստաբանի տղամարդ բարեկամները, ում շահերը ինքը պաշտպանել է:

Ըստ Փաստաբանի՝ 29.06.2024թ. Դիմողի փաստաբան Տիգրան Ղազարյանը, շարունակելով իր վստահորդի գործը, փորձել է ազատել տարածքը՝ փաստացի ոտնահարելով Միքայել Խալաթյանի սեփականության իրավունքը:

Փաստաբանը հայտնել է, որ փաստաբան Տիգրան Ղազարյանի հետ գտնվել է վատ փոխհարաբերությունների մեջ և ներկայացված կարգապահական հայցադիմումը փոխհարաբերություններ պարզելու միջոց է:

Վերոգրյալի հաշվառմամբ, փաստաբանը խնդրել է մերժել կարգապահական վարույթի հարուցումը:

Միևնույն ժամանակ սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 14.10.2024 թվականին Փաստաբանին ներկայացվել է պահանջ (այսուհետև՝ Պահանջ) Օրենքի 39.5-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Պահանջը ստանալուց հետո Փաստաբանը ծանոթացել է սույն կարգապահական գործի նյութերին և 21.10.2024թ. ներկայացրել է բացատրություն, որով հայտնել է, որ ըստ գործի նյութերի Արման Շահինյանը հայտարարություն է տվել այն մասին, որ Փաստաբանը կոպտորեն վիրավորել է Դիմողին՝ անվանելով «գող», «ավազակ», «սրիկա» և նույնիսկ հայհոյախառն բնույթի արտահայտություններ է հնչեցրել Դիմողի հասցեին: Ավանի ոստիկանության բաժանմունքի պետի աշխատասենյակում Փաստաբանը կրկին սկսել է վիրավորական բնույթի արտահայտություններ հնչեցնել և անգամ Դիմողին անվանել է «խոզ», և ասել է «վրայիցդ ինչ հոտ ասես գալիս է» և այդպես շարունակ:

Փաստաբանը նշել է, որ Արման Շահինյանը հանդիսանում է Դիմողի և նրա ընտանիքի վարորդը, չի գտնվել ՀՀ ոստիկանության Ավանի բաժանմունքի պետի սենյակում և չէր կարող ականատես լինել Փաստաբանի վարքագծին: Նշել է, որ Արսեն Շահինյանի հայտարարությունը նույնաբովանդակ է Դիմողի դիմումին, այդ հայտարարությունը կազմվել է փաստաբան Տիգրան Ղազարյանի կողմից, ով Փաստաբանի հետ գտնվել է վատ հարաբերությունների մեջ:

Նշել է, որ ՀՀ ոստիկանության Ավանի բաժանմունքի պետի սենյակում գտնվել են բաժանմունքի պետը, երկու ոստիկաններ, ում տվյալները չգիտի, ինքը, Դիմողը, Միքայել Խալաթյանը և Գառնիկ Սաֆարյանը:

Փաստաբանը բացատրությանը կից ներկայացրել է Միքայել Խալաթյանի դիմումը, որով վերջինս տեղեկացրել է, որ Փաստաբանը որևէ մեկին չի վիրավորել և հայհոյախոս արտահայտություններ չի հնչեցրել, իսկ Դիմողն իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ է հայտնել Պալատին, ՀՀ ոստիկանության Ավանի բաժանմունքի պետի սենյակում Արսեն Շահինյանը ներկա չի գտնվել, այնտեղ եղել են ոստիկանները և իր ընկեր Գառնիկ Սաֆարյանը:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը</u>.

Պալատի նախագահի 19.08.2024թ. թիվ 204-Ա/ԿԳ-24165 որոշմամբ փաստաբան Հռիփսիմե Մնացականյանի Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 2.2.2 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

23.08.2024թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Դավիթ Առաքելյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները</u>.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 22.10.2024թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-2 կետերում նշված փաստերը և չի հաստատվել 3-րդ կետում նշված փաստը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 22.10.2024թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 27.11.2024թ. ժամը 19:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստը.

1. 24.06.2024թ. Փաստաբանը և Դիմողը գտնվել են ՀՀ, ք. Երևան, Ավան, Ծարավ Աղբյուր 55/5 շենքի տարածքում: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի դիմումով և Փաստաբանի բացատրությամբ:*

2. Փաստաբանը 24.06.2024թ. Փաստաբանը և Դիմողը գտնվել են ՀՀ ոստիկանության Ավանի բաժանմունքի պետի աշխատասենյակում: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի դիմումով և Փաստաբանի բացատրությամբ:*

Տվյալ դեպքում, սույն կարգապահական վարույթի շրջանակներում՝ Դիմողի դիմումով և Պատասխանողի բացատրություններով, ինչպես նաև դրանց կից ներկայացված նյութերի ուսումնասիրության արդյունքում հաստատված չեն համարվում հետևյալ փաստերը.

3. Փաստաբանը Դիմողի հասցեին հնչեցրել է հայհոյախառն արտահայտություններ և վիրավորել է Դիմողին՝ վերջինիս ասելով «գող», «ավազակ», «սրիկա», «խոզ», «վրայիցդ ինչ հոտ ասես գալիս է»:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Հռիփսիմե Մնացականյանը փաստաբան է հանդիսանում 06.12.2023թ. և 2023-2024թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Հռիփսիմե Մնացականյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններ իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում ոչ միայն փաստաբանի կողմից որոշակի վարքագծի դրսևորման հանգամանքը, այլ նաև դրսևորվող վարքագծում Օրենքով և/կամ Կանոնագրքով ամրագրված պահանջների հնարավոր խախտման հատկանիշների առկայության հանգամանքը, որի պայմաններում միայն Հանձնաժողովը կարող է քննարկել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Այս համատեքստում, Կանոնագրքի մի շարք դրույթների կիրառելիությունը ևս ինքնանպատակ չէ և Հանձնաժողովի կողմից այդ դրույթներով ամրագրված պահանջների հնարավոր խախտման հատկանիշների համատեքստում փաստաբանի վարքագծի քննարկման իրավական հնարավորությունն ուղղակիորեն փոխկապակցված է որոշակի պայմանների առկայության կամ բացակայության հետ:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի և/կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Տվյալ դեպքում, Դիմողն ըստ էության Փաստաբանին վերագրում է փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը կասկածի տակ դնող կամ խաթարող գործողություններ կատարելու վարքագիծը:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2-րդ ենթակետի համաձայն՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:*

Փաստաբանի վարքի նկատմամբ հարաբերականորեն խիստ սահմանափակումները պայմանավորված են փաստաբանի մասնագիտության առանձնահատուկ բնույթով և հանրային բարձր կարգավիճակով, որը պայմանավորված է փաստաբանության՝ որպես իրավապաշտպան գործունեության մեծ կարևորությամբ:

Վերոգրյալի հաշվառմամբ, փաստաբանի վրա դրվում են բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, և նրա նկատմամբ գործում են առանձնահատուկ պահանջներ՝ կապված անձնական վարքագծի հետ՝ հաշվի առնելով, որ փաստաբանի օրինակելի վարքագծի կարևորագույն դրսևորումներից է իր գործընկերների և այլ անձանց անձի, արժանապատվության և համբավի նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելը, միջանձնային քաղաքավարի վարվեցողությունը:

Իր հերթին Կանոնագրքի 2.2.2 ենթակետով փաստաբանի վրա դրվում է համակողմանի պարտականություն իր՝ որպես փաստաբանի գործունեության բոլոր բնագավառներում նպաստել փաստաբանության մասնագիտական բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու արտահայտմանը: Սույն պարտականությունն ունի ինչպես պոզիտիվ, այնպես էլ՝ նեգատիվ բնույթի պարտավորության դրսևորում: Առաջին դեպքում ենթադրվում է փաստաբանի կողմից որոշակի ակտիվ գործողությունների կատարում սեփական մասնագիտական և անձնական վարկանիշի բարձրացման ուղղությամբ՝ այդպիսով նպաստելով փաստաբանի մասնագիտության հանրային վարկանիշի բարձրացմանը: Նեգատիվ պարտականությունը փաստաբանի պատշաճ վարքագծի նվազագույն շեմն է, երբ փաստաբանից պահանջվում է առնվազն չկատարել հանրորեն պարսավելի, անպարկեշտ, հակաօրինական և փաստաբանի մասնագիտության հանրային վարկը խաթարող գործողություն կամ անգործություն: Փաստաբանի օրինակելի վարքագծի կարևորագույն դրսևորումներից է իր գործընկերների և այլ անձանց անձի, արժանապատվության և համբավի նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելը, միջանձնային քաղաքավարի վարվեցողությունը:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ 24.06.2024թ. Փաստաբանը և Դիմողը գտնվել են

ՀՀ, ք. Երևան, Ավան, Ծարավ Աղբյուր 55/5 շենքի տարածքում, որտեղ տեղի ունեցել վերջիններիս մասնակցությամբ միջադեպ: Այնուհետև, կողմերը գտնվել են ՀՀ ոստիկանության Ավանի բաժանմունքի պետի աշխատասենյակում, որտեղ քննարկվել է վարձակալված տարածքից գույքերի տարահանման հարցը:

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում Դիմողի կողմից 21.10.2024թ. ներկայացվել է կարգապահական վարույթի համար ապացույցներ ներկայացնելու վերաբերյալ դիմում, որը քննարկման առարկա է հանդիսացել 27.11.2024թ. տեղի ունեցած կարգապահական նիստի ընթացքում: Մասնավորապես, Դիմողը նշել է, որ միջադեպի ականատես են եղել Արման Շիրինյանը և Արտյոմ Մկրտչյանը և խնդրել վերջիններիս հրավիրել տեղի ունեցող կարգապահական նիստին որպես վկաներ:

Հանձնաժողովը արձանագրում է, որ միջնորդության մեջ բացակայել են Արման Շիրինյանի և Արտյոմ Մկրտչյանի հասցեները, իսկ Դիմողը չի ներկայացել կարգապահակն գործով նշանակված նիստին, ինչն անհնարին է դարձրել նշված անձանց որպես վկա ներգրավվելու հանգամանքը: Բացի այդ, հարկ է նշել, որ Արման Շիրինյանի 21.08.2024թ. գրավոր հայտարարությանում նույնպես նշված չէ վերջինիս հասցեն:

Այս առումով, Հանձնաժողովը, հիմնվելով միջնորդության ներկայացման ընդհանուր դատավարական կանոնների վրա, արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության 32-րդ հոդվածի համաձայն՝ *Դատարանը վկա հրավիրում է իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ: Վկա հրավիրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելիս նշվում է այն փաստը, որի վերաբերյալ վկան պետք է հարցաքննվի, ինչպես նաև նշվում են վկայի անունը, ազգանունը, իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների դեպքում՝ նաև հայրանունը (այսուհետ՝ անուն) և* ***հասցեն:***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասին համաձայն՝

(...)

2. Վկա կանչելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելիս պետք է նշվի այն փաստը, որի վերաբերյալ վկան պետք է հարցաքննվի, վկայի անունը և ***հասցեն:***

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված պահանջը չկատարելը վկա կանչելու վերաբերյալ ***միջնորդությունը մերժելու հիմք է:***

Վերոնշյալ դատավարական նորմերի համակարգային վերլուծությանից հետևում է, որ վկա հրավիրելու վերաբերյալ միջնորդության մեջ պարտադիր պետք է նշել վկաների հասցեները:

Տվյալ դեպքում, Հանձնաժողովը մերժել է վկաներ հրավիրելու վերաբերյալ միջնորդություններն այն պատճառաբանությամբ, որ միջնորդությունում բացակայել է վկաներ՝ Արման Շիրինյանի և Արտյոմ Մկրտչյանի հասցեները: Ընդ որում, Հանձնաժողովը նիստի ընթացքում փորձել է Փաստաբանի միջոցով ճշգրտել վկաների հասցեները, սակայն Փաստաբանը տեղեկություններ չի ունեցել: Ավելին, հաշվի առնելով, որ Դիմողը կարգապահական նիստին ներկա չի գտնվել, Հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել Դիմող Արսեն Պապոյանի միջոցով պարզել Արման Շիրինյանի և Արտյոմ Մկրտչյանի հասցեները:

Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն կարգապահական վարույթի շրջանակներում Փաստաբանին վերագրվող Կանոնագրքի 2.2.2 ենթակետով սահմանված պահանջներին հակասող վարքագծի դրսևորման հանգամանքը Դիմողի կողմից հնարավոր կլիներ ապացուցել միայն վկայի ցուցմունքով: Տվյալ դեպքում, Դիմողի կողմից չի ներկայացվել

պատշաճ միջնորդություն, ինչը հանգեցրել է նրան, որ Հանձնաժողովը սույն կարգապահական գործում չի կարողացել ներգրավվել և լսել վկաներին:

Հաշվի առնելով ողջ վերոգրյալը՝ Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրությունները և դրանց կից ներկայացված փաստաթղթերն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի կողմից Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտում թույլ տալու փաստը չի հաստատվել:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Հռիփսիմե Ռուբիկի Մնացականյանի (արտոնագիր՝ թիվ 3523) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-24165 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-24165-2-Ա
27 նոյեմբերի 2024թ.
ք.Երևան